# Կանաչ կլիմայի հիմնադրամ (GCF) Կանաչ տնտեսության ֆինանսավորման ծրագիր (GEFF)

# Տարածաշրջանային – Երկարացում II

Տեղակայությունը՝
Տարածաշրջանային

Ծրագրի համարը՝
52401

Բիզնես ոլորտ՝
Ֆինանսական հաստատություններ

Պետական/մասնավոր՝
Մասնավոր

Բնապահպանական կատեգորիա՝
FI (ֆինանսական հաստատություններ)

Հաստատման ամսաթիվը՝
2021թ.-ի մարտի 10-ը

Կարգավիճակը՝
**Հայեցակարգը ուսումնասիրվել է**

Ծրագրի ամփոփ փաստաթղթի անգլերեն արբերակի հրապարակման ամսաթիվը՝
2021թ.-ի փետրվարի 01-ը

# Ծրագրի նկարագրություն

ՎԶԵԲ-ի և Կանաչ կլիմայի հիմնադրամի կողմից ֆինանսավորվող փաթեթի երկրորդ երկարացումը (Երկարացում II) տրամադրվել է Բանկի՝ Կանաչ տնտեսության ֆինանսավորման ծրագրերի միջոցով և ՎԶԵԲ-ի գործունեության երկրների ֆինանսական հաստատություններին առաջարկում է պարտքի ֆինանսավորում՝ կլիմայի փոփոխության մեղմացմանն ու հարմարվողականությանն ուղղված ներդրումների համար: Ծրագիրն իրենից ներկայացնում է Կանաչ կլիմայի հիմնադրամի Կանաչ տնտեսության ֆինանսավորման ծրագրի (GCF GEFF) Տարածաշրջանային շրջանակի երկրորդ երկարացումը (Ծրագրի համարը՝ 50223):

Երկարացում II-ը բաղկացած կլինի մինչև 497 միլիոն ԱՄՆ դոլար ֆինանսավորման փաթեթից, որից 373 միլիոն ԱՄՆ դոլարի չափով գումարը կտրամադրվի Բանկի սովորական ռեսուրսներից, իսկ մինչև 124 միլիոն ԱՄՆ դոլարի չափով գումարը՝ Կանաչ կլիմայի հիմնադրամի կողմից, որը պետք է տեղաբաշխվի Կանաչ տնտեսության ֆինանսավորման ծրագրի ներքո Հայաստանում, Եգիպտոսում, Վրաստանում, Հորդանանում, Մոլդովայում, Մոնղոլիայում, Մարոկկոյում, Սերբիայում, Տաջիկստանում և Թունիսում:

Երկարացում II-ը կշարունակի ֆինանսավորում տրամադրել իրավասու երկրների՝ ընտրության պահանջներին համապատասխանող տեղական ֆինանսական հաստատություններին, որպեսի նրանք հետագայում վարկեր տրամադրեն մասնավոր հատվածի բիզնեսներին, անհատներին, բնակարանային կոլեկտիվներին, բարձր արդյունավետության կլիմայական տեխնոլոգիաներ մատակարարներին, վաճառողներին և ծառայություններ մատուցողներին կլիմայական փոփոխությունների մեղմացմանն ու հարմարվողականությանն ուղղված ներդրումների համար՝ աջակցելով անցմանը դեպի Կանաչ տնտեսություն:

# Ծրագրի նպատակները

Երկարացում II-ը կշարունակի նպաստել կլիմայի փոփոխության մեղմացման և կլիմայի փոփոխության հարմարվողականության ֆինանսավորման համար նոր շուկաների ստեղծմանը և/կամ առկա շուկաների ընդլայնմանը: Դրանով ծրագիրը կնպաստի ՎԶԵԲ-ի՝ դեպի Կանաչ տնտեսություն անցման ռազմավարական նպատակի իրականացմանը:

Երկարացում II-ը կնպաստի մասշտաբների ընդարձակմանը՝ աջակցելով արդյունաբերական, առևտրային, բնակարանային, տրանսպորտային և գյուղատնտեսական ոլորտներում կլիմայի փոփոխության մեղմացման և կլիմայի փոփոխության հարմարվողականության ավելի քան 6500 ընդարձակելի և կրկնօրինակելի ծրագրերի ֆինանսավորմանը: Այն կլուծի տեխնոլոգիական

մատակարարման շղթաների երկայնքով առաջացող շուկայական բազմաթիվ խոչընդոտների հարցը և կբացահայտի մասնավոր հատվածում ներդրումների ներուժը:

## Ազդեցությունն անցումային շրջանի վրա

Կանաչ կլիմայի հիմնադրամի Կանաչ տնտեսության ֆինանսավորման ծրագրի (GCF GEFF) շրջանակներում Երկարացում II-ի միջոցով արվող՝ ֆինանսավորման երրորդ հատկացումը կշարունակի նպաստել անցմանը դեպի բնապահպանական տեսակետից կայուն, ցածր ածխածնային և կլիմայի փոփոխությունների հանդեպ կայուն տնտեսություններ այն 10 երկրներում, որտեղ ՎԶԵԲ-ը ներդրումներ է կատարում ՝ թույլ չտալով, որ այդ տնտեսությունները բարձր ածխածնային, կլիմայի նկատմամբ խոցելի և (կամ) էկոլոգիապես վնասող/ աղտոտող փակուղի ընկնեն: Դա իրականացվելու է ֆինանսական միջնորդներին ֆինանսավորում և նոու-հաու տրամադրելու միջոցով, որպեսզի նրանք հետագայում ֆինանսավորեն բարձր արդյունավետությամբ «կլիմայական» տեխնոլոգիաներ ու լուծումներ:

## Հաճախորդները

Վարկառու կարող են լինել տեղական ֆինանսական հաստատությունները՝ բանկերը, միկրոֆինանսական հաստատությունները և լիզինգային ընկերությունները, որոնք գործում են ընտրության պահանջներին համապատասխանող երկրներում:

## ՎԶԵԲ-ի կողմից տրամադրվող ֆինանսավորում

373,000,000.00 ԱՄՆ դոլար

## Ծրագրի ընդհանուր գումարը

373,000,000.00 ԱՄՆ դոլար

Երկարացում II-ը բաղկացած կլինի 373 միլիոն ԱՄՆ դոլար գումարի չափով հատկացումից, որը կտրամադրվի Բանկի սեփական միջոցներից, և մինչև 124 միլիոն ԱՄՆ դոլարի չափով գումարից, որը կտրամադրվի Կանաչ կլիմայի հիմնադրամի կողմից:

## Հավելյալություն

Տեղական ֆինանսական հաստատությունները և Կանաչ կլիմայի հիմնադրամի Կանաչ տնտեսության ֆինանսավորման ծրագրի (GCF GEFF) շրջանակում նրանց հաճախորդները կօգտվեն տեխնիկական աջակցությունից՝ ուժեղացնելու սեփական կարողությունները կանաչ ենթածրագրերը նույնականացնելու,

գնահատելու և ֆինանսավորելու գործընթացներում: Տեղական ֆինանսական հաստատությունները կօգտագործեն նաև ՎԶԵԲ-ի փորձը՝ Կանաչ կլիմայի հիմնադրամի Կանաչ տնտեսության ֆինանսավորման ծրագրի (GCF GEFF) շրջանակներում գենդերային ասպեկտները հաշվի առնող մոտեցումը բարելավելու համար՝ օգնելով ենթավարկառուներին ամրապնդել իրենց կայունությունը փոփոխվող կլիմայի պայմաններում:

## Բնապահպանական և սոցիալական ազդեցության ամփոփ նկարագիր

Դասվել է FI (ֆինանսական հաստատություններ) կատեգորիայի (Բնապահպանական և սոցիալական քաղաքականություն՝ ԲՍՔ 2019թ.): Կանաչ տնտեսության ֆինանսավորման ծրագրի (GEFF) գործարքները զգալի բնապահպանական հնարավորություններ են պարունակում: Տեղական ֆինանսական հաստատություններից կպահանջվի, որ նրանք համապատասխանեն ՎԶԵԲ-ի՝ Գործունեության նկատմամբ պահանջ (PR) 2, 4 և 9-ին, ներառյալ 2019թ.-ի ԲՍՔ-ի հետ մեկտեղ ներկայացված՝ բացառությունների ընդլայնված ցուցակը և Ուղղորդման պահանջը: Մասնակցության պահանջներին համապատասխանող ենթածրագրերը պետք է համապատասխանեն բնապահպանական, սոցիալական, աշխատանքային, առողջապահական և անվտանգության ազգային օրենսդրությանը, ինչպես նաև բնապահպանական և սոցիալական իրավասության չափանիշներին, եթե դրանք կիրառելի են: Ցանկացած նոր տեղական ֆինանսական հաստատություններից պահանջվում է լրացնել ՖՀ-ների համար ԲՍ ուսումնասիրության հարցաշարը և այն ներկայացնել Բնապահպանական և սոցիալական բաժին՝ քննության, որպեսզի հաստատվի դրանց համապատասխանությունը Գործունեության նկատմամբ պահանջներին: Տեղական բոլոր ֆինանսական հաստատություններից կպահանջվի Բանկին ներկայացնել Բնապահպանական և սոցիալական տարեկան հաշվետվություններ և զեկուցել ենթածրագրերի և դրանց՝ կլիմայի փոփոխության մեղմացման և հարմարվողականության օգուտների մասին:

## Տեխնիկական աջակցություն և դրամաշնորհային ֆինանսավորում

Ի լրումն Երկարացում II-ին կտրամադրվի մոտավորապես 24 միլիոն ԱՄՆ դոլարի չափով տեխնիկական աջակցության փաթեթ՝ կարողությունների զարգացման, մարքեթինգի, ծրագրերի գնահատման և ընդհանուր մոնիթորինգի և հաշվետվությունների տրամադրման համար: Զուգահեռաբար կիրականացվի նաև առանձին գենդերային բաղադրիչ, որը կօգնի լուծել գենդերային ասպեկտների հետ կապված առաջարկի և պահանջարկի խոչընդոտների հարցը կանաչ վարկավորման պրոդուկտների ձևավորման և վաճառքի համատեքստում:

# Ծրագրի ամփոփ փաստաթղթի վերջին թարմացումը՝

2021թ.-ի փետրվարի 01-ը։

## Անցումային շրջանի ընկալումը

Այստեղ կարող եք լրացուցիչ տեղեկություններ գտնել առ այն, թե ինչ մոտեցումներ է կիրառում ՎԶԵԲ-ը անցումային շրջանում առաջընթացի վրա ազդեցությունը չափելու համար։

## Բիզնես հնարավորություններ

Բիզնես հնարավորությունների կամ գնումների համար դիմե՛ք հաճախորդի ընկերությանը։

ՎԶԵԲ-ի հետ կապված (գնումներին չառնչվող) բիզնես հնարավորությունների համար դիմե՛ք.

Հեռ.՝ +44 20 7338 7168
Էլ-փոստ՝ projectenquiries@ebrd.com

Պետական ոլորտում ծրագրերի համար այցելե՛ք ՎԶԵԲ-ի գնումներ։

Հեռ.՝ +44 20 7338 6794
Էլ-փոստ՝ procurement@ebrd.com

## Ընդհանուր հարցումներ

Կարող եք անել կոնկրետ հարցումներ՝ օգտագործելով ՎԶԵԲ-ի հարցումների ձևաթուղթը։

## Բնապահպանական և սոցիալական քաղաքականություն (ԲՍՔ)

ԲՍՔ-ն և դրա հետ կապված՝ Գործունեության նկատմամբ պահանջները (ԳՊ-ներ) սահմանում է այն ուղիները, որոնց միջոցով ՎԶԵԲ-ն իրականացնում է իր հանձնառությունը՝ խթանելու «էկոլոգիապես առողջ և կայուն զարգացում»։ ԲՍՔ-ն և ԳՊ-ները ընդգրկում են հատուկ դրույթներ, ըստ որոնց հաճախորդները պետք է համապատասխանեն հրապարակայնացման և խորհրդատվության մասին ազգային օրենքների կիրառվող պահանջներին, ինչպես նաև ստեղծեն բողոքարկման մեխանիզմ՝ շահագրգիռ կողմերի մտահոգությունները և բողոքները ստանալու և լուծումները դյուրացնելու նպատակով, մասնավորապես, հաճախորդի և ծրագրի կողմից բնապահպանական և սոցիալական ասպեկտների

կատարողականի վերաբերյալ: Կախված ծրագրի բնապահպանական և սոցիալական ռիսկերի և ազդեցությունների բնույթից և մասշտաբից, ՎԶԵԲ-ը լրացուցիչ պահանջում է, որ իր հաճախորդները, անհրաժեշտության դեպքում, տեղեկություն հրապարակեն ծրագրից բխող ռիսկերի և ազդեցությունների մասին կամ բովանդակալից խորհրդակցություններ անցկացնեն շահագրգիռ կողմերի հետ, դիտարկեն նրանց կարծիքներն ու արձագանքեն դրանց:

Այս կապակցությամբ ՎԶԵԲ-ի գործելակերպի վերաբերյալ ավելի մանրամասն տեղեկությունները ներկայացված են ԲՍՔ-ում:

# Բարեվարքություն և համապատասխանություն

ՎԶԵԲ-ի՝ Համապատասխանության վերահսկման գլխավոր տնօրենի գրասենյակը (ՀՎԳՏԳ) խթանում է լավ կառավարումը և ապահովում բարեվարքության բարձրագույն չափանիշների կիրառումը Բանկի գործունեության բոլոր ասպեկտներում՝ միջազգային լավագույն փորձի համաձայն: Բանկի բոլոր հաճախորդների վերաբերյալ իրականացվում է բարեվարքության պահանջներին համապատասխանության ստուգում-ուսումնասիրություն՝ համոզվելու, որ ծրագրերը չեն պարունակում Բանկի համար անընդունելի ռիսկեր բարեվարքության կամ հեղինակության առումով: Բանկի համոզմամբ, ծրագրի գնահատման և հաստատման փուլերում խնդիրների հայտնաբերումն ու լուծումը Բանկի գործարքների բարեվարքության ապահովման ամենաարդյունավետ միջոցներն են: ՀՎԳՏԳ-ն առանցքային դեր է կատարում պաշտպանիչ այս գործողություններում, ինչպես նաև օգնում է վերահսկել բարեվարքությանն առնչվող ռիսկերը ծրագրերի հետներդրումային փուլերում:

ՀՎԳՏԳ-ն նաև պատասխանատու է ՎԶԵԲ-ի կողմից ֆինանսավորվող ծրագրերում խարդախության, կոռուպցիայի և չարաշահման կապակցությամբ մեղադրանքների հետաքննության համար: Ցանկացած անձ, ինչպես Բանկի ներսում, այնպես էլ նրա սահմաններից դուրս, ով կասկածներ ունի, որ առկա են խարդախության կամ կոռուպցիայի դեպքեր, պետք է գրավոր զեկույց ներկայացնի Համապատասխանության վերահսկման գլխավոր տնօրենին էլ-փոստով՝ compliance@ebrd.com: Խնդիրների մասին բոլոր զեկույցները կքննվեն ՀՎԳՏԳ-ի կողմից՝ հետագա քայլերը որոշելու նպատակով: Քննվելու են բոլոր զեկույցները, այդ թվում՝ անանուն զեկույցները: Զեկույցները կարող եք ներկայացնել Բանկի կամ Բանկի գործունեության ցանկացած երկրի լեզվով: Տեղեկությունը տրամադրելիս անհրաժեշտ է դրսևորել բարեխիղճ մոտեցում:

# Տեղեկությունների հասանելիության քաղաքականություն (ՏՀՔ)

ՏՀՔ-ն սահմանում է, թե ինչպես է ՎԶԵԲ-ը հրապարակայնացնում

տեղեկությունները և խորհրդակցում շահագրգիռ կողմերի հետ, որպեսզի նպաստի ՏՀՔ-ի ռազմավարությունների, քաղաքականությունների և գործառնությունների մասին ավելի լավ իրազեկմանն ու ընկալմանը 2020թ. հունվարի 1-ից ուժի մեջ մտնելուց հետո: Խնդրում ենք այցելել Տեղեկությունների հասանելիության քաղաքականության կայքէջը՝ պարզելու, թե ինչ տեղեկություններ են առկա ՎԶԵԲ-ի կայքում:

Տեղեկություններ ստանալու համար կարող եք կոնկրետ հարցումներ ներկայացնել՝ օգտագործելով ՎԶԵԲ -ի հարցումների ձևաթուղթը:

# Ծրագրերի հաշվետվողականության անկախ մեխանիզմ (ԾՀԱՄ)

Եթե Հաճախորդի կամ Բանկի հետ բնապահպանական և սոցիալական ասպեկտների կամ հրապարակայնացման հետ կապված խնդիրների լուծմանն ուղղված ջանքերն (օրինակ, Հաճախորդի՝ Ծրագրի մակարդակով բողոքարկման մեխանիզմի կամ Բանկի ղեկավարության հետ անմիջական ներգրավման միջոցով) ապարդյուն են, ապա անհատներն և կազմակերպությունները կարող են դիմել ՎԶԵԲ-ի՝ Ծրագրերի հաշվետվողականության անկախ մեխանիզմին (ԾՀԱՄ)՝ իրենց մտահոգող խնդիրների լուծումը ստանալու համար: ԾՀԱՄ-ն անկախ եղանակով քննում է Ծրագրի հետ կապված խնդիրները, որոնք, ենթադրաբար, վնաս են պատճառել (կամ, հավանաբար, կարող են վնաս պատճառել): Մեխանիզմի նպատակն է. աջակցել Ծրագրի շահագրգիռ կողմերի միջև երկխոսությանը՝ շրջակա միջավայրի, սոցիալական ասպեկտների և հրապարակայնացման հետ կապված խնդիրները լուծելու նպատակով, պարզել, արդյոք Բանկը համապատասխանել է իր իսկ Բնապահպանակա և և սոցիալական քաղաքականությանը կամ իր՝ Տեղեկությունների հասանելիության քաղաքականության՝ Ծրագրին վերաբերող կոնկրետ դրույթներին, և, անհրաժեշտության դեպքում, վերացնել այդ քաղաքականություններին վերաբերող ցանկացած անհամապատասխանություն՝ միաժամանակ կանխելով Բանկի անհամապատասխանության դեպքերն ապագայում:

Խնդրում ենք այցելել Ծրագրերի հաշվետվողականության անկախ մեխանիզմի կայքէջը՝ տեղեկանալու, թե ինչպես կարելի է Դիմում ներկայացնել՝ լրացնելով առցանց գաղտնի ձևաթուղթը, էլ-փոստով, փոստով կամ հեռախոսով: ԾՀԱՄ-ը պատրաստ է քննարկել ձեր մտահոգությունները և պատասխանել ցանկացած հարցերի, որոնք դուք կարող եք ունենալ Դիմումի ներկայացման կամ վարման վերաբերյալ, և այս գործընթացներն իրականացնելիս ԾՀԱՄ-ը հետևում է Ծրագրերի հաշվետվողականության քաղաքականությանը և Ուղեցույցին: Ըստ պահանջի, Դիմումատուների ինքնությունը կարող է գաղտնի պահվել:

Կիսվել այս էջով.